թեան այց ելանել Ալէքսանդրապոլու հայազն ժողովրդեան, և ի մօտոյ ծանօթանալով գործին՝ խաղաղասիրական ճանապարհով իրաւախոհ կացուցանել Հոգևոր կառավարութեան նախանդամ Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանին և Հոգաբարձութեանը միմեանց հետ, և իւր տնօրէնութեանց հետևանքը ծանուցանել Սինոդին։

—

3 Յունվ. Սինոդը ըստ հաճութեան Վեհափառ Կաթուղիկոսի վերահաստատեց իրանց պաշտօնի մէջ Վանական կառավարութեան անդամներին՝ որք են Գ-եր. Սարգիս եպիսկոպոս Տէր Գասպարեան նախագահ, Արժ. Գրիգորիս և Անտոն վարդապետներ՝ անդամ, այլ և որոշեց Արժ. Անտոն վարդապետին կարգել ագարակի տեսուչ և Արժ. Յովհաննէս վարդապետ Ղալամեանցին յաւելուլ ի թիւս անդամոց Վանական կառավարութեան։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—

ԼԵՌՆՈՒ

ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ ԱՄՍՕՐԵԱՅ.

ԽՄԲԱԳԻՐ - ՏԷՐ

Հ. ՍԵՐՈՎԲԷ ՅԷՐՎԻՃԵԱՆ.

Ա. ՏԱՐԻ. ՅՈՒՆՎԱՐ. — Թ. 1.

—

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ.

Ամսօրեայ ուսումնաթերթիս տարեգրին է կանխիկ կէս Օսմանեան ոսկի, Թղթատարի ծախիւք վաթսուն արծաթի գահեկան։ Առանձինն կը վաճառուի հինգ գահեկանի։

Բաժանորդ գրուիլ ուզողները դիմելու են առ Ա. Պիպէոճեան, Պոլիս՝ Յակոբեան խան, թիւ 14։ Նաև Խմբագրութեան անկ եղող գրութիւնք պէտք են ուղղուիլ մի և նոյն տեղն՝ Խմբագրին հասցէիւ։

Ամէն Հինգշաբթի՝ Խմբագիրն վերագոյն յիշատակուած տեղը կը գտնուի։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.